

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևալ ժամանակավոր թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին

N	Ստորաբաժանման և պաշտոնի անվանումը	Ծածկագիրը
1	Գիտության և խորհրդարկություն վարչության Արագածունի խորհրդարկություն բաժնի պետ	(30-2.2-147)
2	Գիտության և խորհրդարկություն վարչության Արարարի խորհրդարկություն բաժնի պետ	(30-2.2-148)
3	Գիտության և խորհրդարկություն վարչության Արմավիրի խորհրդարկություն բաժնի պետ	(30-2.2-149)
4	Գիտության և խորհրդարկություն վարչության Գեղարքունիքի խորհրդարկություն բաժնի պետ	(30-2.2-150)
5	Գիտության և խորհրդարկություն վարչության Լոռու խորհրդարկություն բաժնի պետ	(30-2.2-151)
6	Գիտության և խորհրդարկություն վարչության Կոտայքի խորհրդարկություն բաժնի պետ	(30-2.2-152)
7	Գիտության և խորհրդարկություն վարչության Շիրակի խորհրդարկություն բաժնի պետ	(30-2.2-153)
8	Գիտության և խորհրդարկություն վարչության Սյունիքի խորհրդարկություն բաժնի պետ	(30-2.2-154)
9	Գիտության և խորհրդարկություն վարչության Վայոց Ձորի խորհրդարկություն բաժնի պետ	(30-2.2-155)
10	Գիտության և խորհրդարկություն վարչության Տավուշի խորհրդարկություն բաժնի պետ	(30-2.2-156)

Վերոնշյալ ժամանակավոր թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաժնի պետը՝

1) կազմակերպում և համակարգում է գյուղատնտեսական խորհրդատվական բնույթի աշխատանքները.

2) կազմակերպում և ապահովում է գյուղատնտեսական խորհրդատվական դասընթացների անցկացումը.

3) իրականացնում է Բաժնի աշխատակիցների արդյունավետ աշխատանքների կազմակերպումը.

4) իրականացնում է Բաժնի ճանաչելիության բարձրացմանն ուղղված աշխատանքներ.

5) իրականացնում է շարունակական աշխատանքներ պետական օժանդակության ծրագրերի իրագրելման և դրանց տարածմանն ուղղություններով.

6) իրականացնում է քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում.

2) ՀՀ Սահմանադրության, «Քաղաքացիական ծառայության մասին», «Գյուղատնտեսությունում համատարած հաշվառման մասին», «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքների, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «ՀՀ գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 742-Լ որոշման և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Աշխատավարձը՝ 256,623 (երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք) ՀՀ դրամ

Լրացուցիչ տեղեկությունների համար քաղաքացիները կարող են դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության անձնակազմի կառավարման բաժին /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնները զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում,
- անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
 - աշխատանքային գործունեության մասին վկայող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),

- արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն աշխատանքային օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 16.04.2019թ.